

ԲԵԼԱՌՈՒՄԻՍՑԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՐԿԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Բելառուսի հարկային համակարգը

Ըստ Համաշխարհային բանկի մեթոդոլոգիայի 2007թ. Բելառուսը հարկերի վճարման հեշտության առումով գրավում է վերջին տեղը աշխարհում: Բելառուսի հարկային համակարգը աչքի է ընկնում իր բարդությամբ և անկայունությամբ: Հարկային օրենսդրությունը հակասում է մի շարք նորմատիվ իրավական ակտերի և ֆինանսների նախարարության կողմից ընդունված որոշումներին: Վերջին 3 տարիներին Բելառուսում չեղյալ են համարվել մոտ 12 հարկային վճարներ, ևս 5-ը՝ 2008 թվականից:

2010 թվականի հունվարի 1-ից ուժի մեջ է մտել Բելորուսի Հարկային օրենսգրքի հատուկ մասը: Հարկային օրենսգիրքը ներառել է մի շարք հարկային օրենքներ, որոնք վերաբերում են անհատական հարկերին և հավաքագրվում են Բելառուսում: 2010 թվականի «Բյուջեի մասին» օրենքը չի պարունակում հարկմանը վերաբերող շատ կանոններ: Նմանապես էլ շատ հարկային կանոններ կանոնակարգվում են երկրորդական կարգավորիչներով (կառավարության որոշումներ), որոնցում ավելի կարճ ժամանակահատվածում կարելի է փոփոխություններ կատարել: Հարկային օրենսգրքի ընդհանուր մասը, որը ուժի մեջ էր մտել 2004 թվականից, նույնպես փոփոխության է ենթարկվել:

Հարկային օրենսգրքի հատուկ մասը ներառում է տարբեր մասեր՝ տարանջատելով առանձին հարկերը: Այն նույնպես պարունակում է հարկային տոկոսադրույքների սանդղակներ՝ ակցիզային հարկի, հողի հարկի, թույլատվության համար վճարներ, շրջակա միջավայրին վերաբերող հարկ, բնական ռեսուրսների օգտագործման հարկ և բազմաթիվ այլ պարտավորություններ: Հարկային օրենսգրքի հատուկ մասում տեղ են գտել դրույթներ, որոնք փոփոխել են նախկինում գործող օրենքների որոշ դրույթներ:

Շահաթահարկ

- բոլոր ծախսերը, որոնք բխում են բիզնեսի նպատակներից և արտացոլվում են հարկ վճարողների հաշվետվություններում, նվազեցվում են համախառն եկամտից, քանի դեռ դրանք ներառված չեն հարկային օրենսգրքի չնվազեցվող ծախսերի ցուցակում:
- օտարերկրյա կազմակերպություններից ստացված շահաբաժիններից և մասնաբաժինների վաճառքից ստացված համախառն եկամուտները Բելառուսի կազմակերպությունների համար համարվում են ոչ գործընթացային եկամուտներ և նվազեցվում են 12%-ով:
- ռեզիդենտ կազմակերպությունների կողմից ռեզիդենտներին վճարվող շահաբաժինները ենթակա են աղբյուրի մոտ հարկման 12%-ով:

Հարկ վճարողները կարող են հայտարարագրել իրենց կողմից վճարված հարկերը՝ եռամսյակային կտրվածքով:

Օտարերկրյա իքավարանական անձանց եկամտահարկի ետքումը.

Համախառն եկամուտը, որը ստացվում է արժեթղթերի վաճառքից Բելառուսի տարածաշրջանում ենթակա է աղբյուրի մոտ հարկման 15%-ով (նախկինում 24%): Այնուամենայնիվ, մասնաբաժինների վաճառքից ստացված շահույթը կամ ռեզիդենտ կազմակերպությունների օգուտները ենթակա են 12%-ով հարկման:

ԱԱՀ

ԱԱՀ-ի տոկոսադրույքը աճել է 18%-ից 20%-ի:

ԱԱՀ-ի վերադարձի ժամանակաշրջանը, ինչպես նաև մյուս հարկատեսակներինը կրճատվել է 10 օրվանից 2 կամ 5 օրվա համապատասխան կանոնակարգի: Հարկ վճարողները, որոնց եկամուտները չեն գերազանցում 3,815 մլն. կարող են ընտրել հայտարարագրման ամսական կամ եռամսյակային ռեժիմը:

Անհատական եկամտահարկ

- Նվիրատվությունը ինչպես ռեզիդենտ, այնպես էլ ոչ ռեզիդենտ անհատ ձեռնարկատերերի կողմից մինչև 17.5 մլն. ազատված են հարկերից, անհատ ձեռնարկատերերի կողմից ստացված շահաբաժինները հարկվում են 12% տոկոսադրույքով (նախկինում 15%),
- Տրանսպորտային միջոցների վաճառքը, եթե այն կշռում է 3,500 կամ նախատեսված է 8 ուղևորների համար, ենթակա է հարկման:

Այլ հարկատեսակներ

- Շրջանառությունից հարկը, տրանսպորտային միջոցների օգտագործման հարկը, մանրածախ վաճառքից հարկը, ավտոմեքենաների կայանման վճարները չեղյալ են համարվել,
- Շրջակա միջավայրի համար նախատեսված հարկը բաժանվել է երկու մասի՝ շրջակայքի և բնական ռեսուրսների շահագործման համար հարկերի,
- շուն պահող սեփականատերերի համար սահմանվել նոր հարկատեսակ, որը սահմանվում է ըստ վզակոթի բարձրության / 3 ամսական և բարձր/

մինչև 40 սմ 0,2 տոկոս

40-70 սմ 0,3 տոկոս

70 և ավելի 0,5 տոկոս

Փորձենք վերագրյալը ներկայացնել և վերլուծել աղյուսակներ 1-2-ում:

Աղյուսակ 1

Բելառուսի ե ՀՀ հարկային համակարգերի համեմատական վերլուծություն

ԱԱՀ

	<i>Բելառուս</i>	<i>Հայաստան</i>
<i>Հարկ վճարողներ</i>	ԱԱՀ վճարող են համարվում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, որոնց եռամսյակային շրջանառությունը գերազանցում է 40.000 եվրոն:	ԱԱՀ վճարող են համարվում ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձինք, իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող ձեռնարկությունները, ում տարեկան հարկվող շրջանառությունը գերազանցում է 58.35 միլիոն դրամը:
<i>Դրույքաչափ</i>	0%, 10%, 20%, 24%, 0.5%	20%, 0%
	Բելառուսիայում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառվում է ուղեկցման, բեռնման, բեռնաթափման և նմանատիպ այլ աշխատանք-	ՀՀ-ում ԱԱՀ-ի գրոյական դրույքաչափ կիրառվում է հետևյալ գործարքների իրացման շրջանառության նկատ-

	Բելառուս	Հայաստան
	ների /ծառայությունների/, որոնք անմիջականորեն կապված են ապրանքների իրացման հետ՝ դեպքում, տարանցիկ փոխանցումների դեպքում, տրանսպորտային միջոցների վերանորոգման դեպքում, երբ դրանք այդ նպատակով տեղափոխում են Բելառուսից Ռուսաստան կամ հակառակը: 10% դրույքաչափ կիրառվում է պարենային և մանկական ապրանքների ներմուծման դեպքում, Բելառուսի տարածքում արտադրված այնպիսի արտադրանքների իրացման ժամանակ, որոնք վերաբերում են բուսաբուծությանը, ձկնաբուծությանը, մեղվաբուծության ու անասնաբուծականը: 0,5% Ռուսաստանի Դաշնությունից արտադրական կարիքների համար ներմուծվող մշակված և չմշակված բոլոր տեսակի ադամանդների և թանկարժեք քարերի դեպքում:	մամբ՝ - Արտահանում ազատ շրջանառության համար և մի քանի այլ մաքսային ռեժիմներով փոխադրվող ապրանքների հարկվող շրջանառության նկատմամբ, - Միջազգային երթուղիներով փոխադրումներ իրականացնող փոխադրամիջոցների սպասարկման, նորոգման, ինչպես նաև փոխադրվող ուղևորների, ուղեբեռների, և փոխադրման ընթացքում ուղևորների հարկվող շրջանառության համար և այլն:
	24% դրույքաչափ կիրառվում է Բելառուսում սպիտակ շաքարի իրացման ներմուծման դեպքում:	
	Մնացած ապրանքների դեպքում 20%:	
Արտոնություններ	- ԱԱՀ-ից ազատվում են այնպիսի ապրանքների արտահանումը, ինչպիսիք են դեղամիջոցներ, դեղագործական սարքավորումներ, պարագաներ հաշմանդամների համար և այլն: - Բելառուսի նախագահի կողմից հաստատված այգեգործական օբյեկտների կառուցման և վերանորոգման շրջանառությունը, - լուսավորման կողմից ծառայությունների մատուցումը կապված գույքի գրավի դիմաց ֆիզիկական անձանց կարճաժամկետ փոխառությունների տրամադրման հետ, - բնակչությանը վարսահարդարական, բաղնիքի, լվացքի և քիմմաքրման, ժամացույցների վերանորոգման, հագուստի և կոշիկների արտադրության և նորոգման, կենցաղային սարքերի տեխնիկական սպասարկման և վերանորոգման, անձնական օգտագործման ապրանքների և կենցաղային ապրանքների վերանորոգման ծառայությունների մատուցման շրջանառությունը:	ԱԱՀ-ից ազատվում են՝ ապահովագրությունը, բանկային գործը և այլ ֆինանսական ծառայությունները, փոխադրման ծառայությունները, կրթական ծառայությունների մեծ մասը, առողջապահության ծառայությունները, կրոնական ծառայությունները: Գիտական և ուսումնական հրատարակությունների իրացումը, ՀՀ կառավարության կողմից սահմանված ցանկում նշված թանկարժեք և կիսաթանկարժեք քարերի իրացումը և այլն:
Հարկ վճարողներ	Հարկ վճարողներ են համարվում տարբեր կազմակերպությունները և րնկերությունները: Ռեզիդենտները հարկ են վճարում ամբողջ աշխարհում՝ ստացած եկամտից, իսկ ոչ ռեզիդենտները՝ միայն Բելառուսի տարածքում ստացած եկամտից:	Նույնն է:
Դրույքաչափեր	Դրույքաչափեր կազմում է 24%: Այն կազմակերպությունները, որոնք իրականացնում են լազերաօպտիկական տեխնիկայի արտադրություն, և այս տեխնիկայի տեսակարար կշիռը ամբողջ արտադրանքի մեջ ոչ պակաս է, քան 50 տոկոսը, շահութահարկ են վճարում 10 տոկոս դրույքաչափով: Այս դրույքաչափի կիրառման համար հիմք է հանդիսանում Բելառուսի զիաության և տեխնոլոգիայի պետական կոմիտեի կողմից որոշումը, որի	Շահութահարկի գումարը հարկվող շահույթի նկատմամբ հաշվարկվում է 20 տոկոս դրույքաչափով:

	Բերանում	Հայաստան
	համաձայն էլ արտադրանքը վերագրվում է լազերատեխնիկական տեսակին: 5 տոկոս դրույքաչափով շահութահարկ են վճարում օրենսդրությանը համաձայն Բելառուսի պետական համալսարանի կողմից ստեղծված գիտատեխնոլոգիական ասոցիացիաները ինֆորմացիոն տեխնոլոգիաների իրացումից ստացված հասույթի և դրանց մշակման ծառայությունների համար	
	Հարկվող շահույթը որոշվում է համախառն եկամտից հանելով ծախսերը, իսկ շահաբաժինների դեպքում որոշվում է հետևյալ բանաձևով՝ $S_6 = X \cdot X (\wedge S - \wedge \Omega),$ որտեղ ^վճարողին հասանելիք շահաբաժինների գումարի հարաբերակցությունը որպես շահաբաժին բաշխված շահույթի ամբողջ գումարին, ^S-որպես շահաբաժին բաշխված շահույթի ամբողջ գումար, ^Ω^լա^ա-սական կազմակերպության կողմից ստացված շահաբաժին, եթե շահաբաժինների այս գումարը նախկինում հաշվի չի առնվել ^Ω-ի կազմում հարկային բազայի որոշման ժամանակ և ստացվել է 2009թ. հունվարի 1-ից ոչ շուտ: Ընդ որում արտարժույթով ստացված շահաբաժինը վերահաշվարկվում է բելառուսական ռուբլիով համաձայն պաշտոնական փոխարժեքի սահմանված Բելառուսի Ազգային բանկի կողմից դրանց ստացման ամսաթվին:	Հարկվող շահույթը որոշվում է համախառն եկամտից հանելով ծախսեր, կորուստներ և այլ նվազեցումներ:
Արտոնություններ	Քրեական համակարգի ուղղիչ հաստատությունների և բուժ - պրոֆիլակտիկ հաստատությունների շահույթը: Այն կազմակերպությունների շահույթը, որոնք օգտագործում են հաշմանդամների աշխատուժը, եթե վերջիններս կազմում են հաշվետու տարվա աշխատողների միջին ցուցակային թվաքանակի 50 տոկոսից ավելին, բացառությամբ այն շահույթի, որը ստացվել է առևտրային և միջնորդական գործունեությունից: Բուսաբուծական (բացի ծաղիկներից, դեկորատիվ բույսերից), անասնաբուծական, ձկնաբուծության և մեղվաբուծական կազմակերպությունների շահույթը, որը ստացվել է իրենց կողմից արտադրածի իրացումից: Կազմակերպությունների շահույթը, որը ստացվել է մանկական սննդի արտադրությունից: Պետական սեփականության իրացումից ստացված շահույթը, որի իրացման ժամանակ ստացված միջոցները բաշխվում են օրենսդրությամբ սահմանված կարգով: Ապահովագրական կազմակերպությունների կողմից կամավոր ապահովագրությունից/կյանքի ապահովագրություն/ ձևավորված պահուստային ֆոնդերի միջոցների ներդրումից ստացված շահույթը: Կազմակերպության շահույթը, որն ուղղված է հանրապետական շաբաթօրյակների (համաձայն օրենսդրության) իրականացմանը:	Արտոնությունները վերաբերում են՝ • գյուղատնտեսական արտադրանքի իրացմանը, • համահայկական բանկի կողմից շահութահարկի վճարմանը, • ձեռագործ գորգերի իրացմանը, • հասարակական, կրոնական և շահույթ ստանալու նպատակ չիէ տապնդող այլ կազմակերպություններին և ՀՀ քաղաքական կուսակցություններին:

**Բելառուսի հարկային համակարգի թերությունների նկարագրությունը
է հարկային բարեփոխումները 2009թ.**

Բելառուսի հարկային համակարգի թերությունները	Հարկային վարչարարության բարելավման և ծանրաբեռնվածության նվազեցման ուղղությամբ կարելի է նշել հետևյալ քայլերը, որոնք կատարվել են Բելառուսում 2009թ
1. Հարկային օրենսդրության բարդություն, ան կայունություն և հակասական բնույթ, 2. Հարկերի բարձր ծանրաբեռնվածության աս տիճան, 3. Հարկային ծառայողների կողմից ինֆորմացիայի պակաս և առանձին դրույթների չիմացություն, 4. Էլեկտրոնային համակարգերի բացակայություն:	1. Անշարժ գույքի հարկի և հողի հարկի միասնական վճարի կիրառում: 2. Տեղական հարկերի վերացում, ինչպիսին են ենթակառուցվածքի պահպանման և զարգացման վճարը և տրանսպորտային վճարը, որը կազմում էր հարկումից հետո կազմակերպության մոտ մնացած շահույթի 3 տոկոսը: 3. Տեղական հարկի միասնական դրույքի սահմանում մանրածախ առևտրից և ծառայությունների մատուցումից՝ 5 տոկոս: 4. Հանրապետական ֆոնդ վճարի վերացումը, որն ուղղված էր գյուղատնտեսական պարենային ապրանքների արտադրությանը և ագրարային խտության աջակցմանը: 5. Մասնավոր կազմակերպությունների՝ առաջին հերթին ՓՄՁ-ների համար նորարարական ֆոնդերի հատկացումների վերացում: 6. Տոկոսադրույքների նվազեցում 8-10 տոկոսով: 7. Մի շարք հրահանգների և դրանց մեթոդների հեշտացում և այլն:

Այսպիսով, ցանկացած հարկային համակարգ ու դրա առանձին հարկման գործիքներն ու լծակները գործնական կիրառության արդյունքում առաջացնում են թե առավելություններ, թե թերություններ: Իսկ դա նշանակում է, որ, ըստ էության, կատարյալ հարկային համակարգ գործնական հարթություններում պարզապես գոյություն չունի, ինչը վերջինիս նկատմամբ առաջացնում է հարկային բարեփոխումներ իրականացնելու մշտական պահանջ և անհրաժեշտություն: